



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


533

zurh-p o

qulhu.



P. 1891



3-93
T-72

Օ. ՇՄԻԴԹԸ

2349

Գ Ա Լ Ի Ս

2004

Թարգմ. Ա. ՀԱՅՈՒՄԵՍՅԱՆ



Ժ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ԱՐՈՐ Տ. ԿԱԶԱՐԵԱՆԻ
ՔԵՐԵՑԻ ՀԱՅ, ԵՎ ՀԱՅԵԱՆԻ ԱՆԴ ԽԵՂԻՆԵՐ

1891

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

№		Ա. Կ.
1.	„Աղքան“ 84 թ.	— — — 3 —
2.	” 87 թ.	— — — 3 —
3.	” 83 թ.	— — — 10 —
4.	” 85 թ.	— — — 10 —
5.	” 86 թ.	— — — 10 —
6.	” 88 թ.	— — — 4 —
7.	” 89 թ.	— — — 3 —
8.	” 90 թ.	— — — 3 —
9.	Ցարագ	90 թ. — — — 3 —
10.	Փայտածել Խոճիկ Կպիտակ տուար. պատկանարդ	— — — — 60
11.	Հակայ մրջիւս, պատ.	— — — — 40
12.	Ժան Բատ. Լիուլի մանկ.	— — — — 10
13.	Անկէ ձկնիկ, Պուշկին	— — — — 30
14.	” II Ալեքս	— — — — 5
15.	Մշակուած եւ անմշակտափ կեռամքը	— — 30
16.	Չար, Արամի արևած	— — — — 50
17.	Ջմլսեօֆ դիւց. (պատկ.)	— — — — 40
18.	Ջանը Խունակ	— — — — 50
19.	Պօզնամի ուսուցչի օրագ.	— — — — 20
20.	Ալ.Դոկի. Երկու մանրավեց	— — — — 15
21.	Վահերսէկ, Սոխակ եւ Խոզարած	— — — — 15
22.	Դմիենս, Հարս և սկնէս.	— — — — 15
23.	Դրսցէ-Կըճ. պըճըթնչակը	— — — — 25
24.	Երեխամերը եւ Արամ բարեկամները	— — 40
25.	Դ. Արայեան, Արեգակնած	— — — — 40
26.	Տորբ Անգեղ եւ Հայկանուշ գեղեցիկ	— — 40
27.	Տիգր, Դամի աղաթթարան	— — — 1 —
28.	Ա. Մ. Ե. Գ. Ծաշակ (ընտիր բանաստ.)	— — 25
29.	Ն. Տ. Անետիքանի, Տեղագրական անբականի 30	— — — — 30
30.	Օրացոյց մեծադիր պատկերագարդ 90 թիւ 30	— — — — 30
31.	Փոքրադիր —	— — — — 15
32.	Փ. Վարդ., Արեւելեւան վիպաշխարհ	— — — — 20
33.	Բասկական Լեզնենա	— — — — 20
34.	Յ. Ղազարեան Գիուկ	— — — — 15

«Երան» յուրաքանչյուր ենց թարգմանչ 1891
Տարբերակ Ենց աշխարհական աշխարհական 1891
0. ՏԱՐԻԴՔ Ենց աշխարհական աշխարհական 1891

83-93
7-72
Ա

Գ Ա Լ Ի Ա



Թարպմ. Ա. Հայություն



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ «ԱՐՈՐ» Տ. ՆԱԶԱՐԵՆԻ
Յօթօքիք. պո. և Բարեկամի. գող. տեկին:

1890

ԳԱԼԻՑ

I.

Իշխան Բօսլաւը մեծ խճառչք էր սարքել. նա քէֆ էր անում իր զինակիցների հետ. Աշխանակին գիշերան անթափանցելի խաւարի մէջ պալում էին նրա հոյտկապ պալատի պատուհանները, որոնց միջով ցոլացող լոյփ ճառագայթները թափանցում էր խաւարի մէջ, ամբողջ պալատի ներսը, ճառագած էր լոյփը. Քաջ կորպէնների բարձրաւայն երգերը, արծաթեայ բաժակների զբնգոցն ու ազմուկը լուսում էր պալատից ու տարածում ամեն կողմ . . . Իշխան Բօսլաւը քէֆ էր անում իր կորպէնների հետ. Կէս գիշերից անց էր արդէն, բայց խոհարաններն ու ծառանները գեռ էլի վազված էին ու պատրաստութիւններ տեսնում. Կիւրերը շաբունակում են կրանց քէֆը և չեն էլ մտածում առն գնալու վրայ. Նրանք երգում են, իրար մօտ պարզենում են, ամեն մինն իր գլուխն է գովում. մէկը պարզենում էր թէ ինքը գնասակով կըխի ամենափոքը ծալին թռչելու ժամանակ:

— Խակ ես ձեռւ կատաղի արշաւի ժամանակ նեաեր կարձակեմ, ասում էր միւսը:

— Ինձ համար ոչինչ բան է մենակ գնալ արջի գէմ, ա-

Հօնութեա պեղորու, Տավուշ, 1890 թ. 25-րդ սօնիք.

Տիգ. „Արօր“ Տ. Ա. Հազարյան, ց. Գոլօսու որ. և Բարձ. ց. տ.

սում էր երրորդը. — վայրի եզի աղօքերից կըբռնեմ ու նրան կը-
կանգնեցնեմ:

— Տղան նա է, որ մէկ խփելով վտրաղին բարձրացնի
նիզակի ծալը, որոսում էր մէ ուրիշ:

— Դրանք ոչինչ, բարեկամնելս, այդ զարմանալի չէ, ինչ
որ դուք էք աւատմում, ասաց Ռօսլաւը. ապա էլ ինչ կտրիմ-
ներ ենք, որ չըկարողանանք նետ ձգել ու գաղաճներին յաղ-
թեւ. բայց դուք տեսել էք իմ աղջկան, գիտէք ինչեր է անում
իմ սիրելի փոքրիկ երեխան. — Նա ոչ մէ դիւցազնեց յետ չի մնալ
նետ ձգելում. նաւակը թիկավարում է ինչպէս մեծ մարդ. վա-
զելս ամենքի առաջը կտրում է, ամենաբարձր ծառի ծալը է,
բարձրանում և ինչ ձերես առանց թամբելով՝ կըճատի կըքի...

— Միթէ . . . բղաւեցին հիւրերը. էլ ինչու ես սպասում,
ինչու չես այդ հրաշքը մեզ ցոյց տալիս. Զւարձացըու հիւրերիդ,
կանչիր նրան, թող երգէ ու պար գայ . . .

— Լաւ բան չէ, բարեկամնելս, երեխան հիմա քնած է.
Լաւ չէ նրա քունը կտրել. ուրիշ անգամ . . .

— Ուրիշ անգամ ուշ կըմինից աղաղակիցին հիւրերը — թող
յետոյ քնի. բեր այստեղ նրան տեսնենք, զւարձացըու մեզ,
սրտներս շահիր . . .

Ռօսլաւն ուզեց մի կերպ ազատուել, սեղանից վեր կացաւ,
բայց հիւրերը շրջապատեցին նրան:

— Փչում ես հա. ինչպէս երկում է հէնց մեծ-մեծ խօսել
գիտես, ասացին հիւրերը եշխանին գրգռելով. Խշանը վիրաւորեց:

— Թող ձեր ուզածը լինի, ասաց նա, կըճնամ, կըզար-
թեցնեմ, կըբերեմ:

Հիւրերը հանդարաւեցին և սպասում էին:

II.

Ապաբանքի միւս ծայրում կազ մի նեղ, դեք սանդուղք,
որ ասմում էր գէափի փոքրիկ ննջարանը. այզտեղ մետաքսէ
վերմակի տակ ինչպէս թռչնակն իր բնի մէջ հանգիստ քնած
էր սեւշեալ Գալիան իր գալիեակ Օքսանայի հետ:

Հանդարս քայլերով Ռօսլաւը մտաւ ննջարան. մօտե-
ցաւ անկողնի վարագորին, զգուշութեամբ բարձրացըրեց և մի
բակչաչափ զմայլւած նայեց քնած երեխային:

— Սիրաս չէ տալս զարթեցնեմ, — մրմնջաց նա ինքնիրան և
մէ քիչ կռացաւ ու ձեռքով շոյեց երեխայի մետաքսանման
գանգուր մազերը:

— Գալմի, Գալիա . . .

Ազիկը կիսով չափ բացեց աչքերը և թևերով գրկեց
հօր գլուխը:

— Հայրիկի, հայրիկի, ինչ երազ եմ տեսել, որ իմանաս:

— Վերկաց, Գալիա, գնանք հիւրերի մօտ, քեզ կամե-
նում են տեսնել . . .

Աղջիկը կոթնեց արմունկի վրայ և աչքերը լայն բաց
արտւ:

— Ո՞ւր գնանք, ինչ հիւրերի մօտ . . . չեմ ուզում ես
հիւրերին . . .

— Ցիմար հօ չես, քեզ իմ քաջերս ուզում են տեսնել,
որ նրանց համար երգես, պարես ու զւարձացնես նրանց, վեր
կաց շուտով:

— Չեմ ուզում հիւրերին, չեմ գնում, քունս տանում է:

— Այսպէս չէ կարելի, աղջիկո, ևս նրանց խօսք եմ տեել,
թէ քեզ կըտանեմ:

Բայց Գոլիան ամեննե ին չըգիտէր թէ ինչ տաել է չէ
կարելի:

— Զեմ գալ, չեմ ուզում, քունս տանում է,—կրկնեց
նա հըելով հօր ձեռքը: Բօսլաւը լուրջ կերպարանք ընդունեց:

— Տես, աղջիկո, շատ լաւ, ևս քեզ զօրով չեմ տանում,
բայց երբ դու իմ խաթըը կոտրում ես, անտրժան ես իմ սիրու:

Աղջիկը տեղից վեր թռուտ:

— Հայրեկ, հայրեկ ջան, ալար էլ կըգամ, կերգեմ էլ,
ինչ որ ուզում ես կանեմ, միայն լին մրայ այգաէս մի նայիր...
Այ, այս ըստէին հագնւեմ, բարի հայրիկո . . . Այ, նայիր լինձ,
դէ համբուրելը ինձ.— այսպէս հօր հետ կատակ անելով Գալիան
ցամկեց թախափ վլոյ ու բարձրացաւ հօր ուսերին նառեց. էլ
նա ինչակս կարող էր յանքերը կիսել. Բօսլաւը, որի ուռաջ զո-
ղում էլն ստրուկներն ու զինւորները, Բօսլաւը, որից վախենում
էլն թշնամիները, ինչակս կրակից, մի ըստէում զավեց իր բար-
կութիւնը, իր հզօր ձեռքերով գրկեց իր թանգագին գանձը
և բերաւ լինջուքի դահլիճը: Քնար ածողը զարկեց քնարի թե-
ւերին, Գալիան իր երկար մեսաքսէ շապկի կիսուաց թեւերը
Ճարպիկութեամբ յետ ձգեց ուսերի վրայ, ուզզեց թեւերի
ոսկի ապարանչանները, թափ տւաւ գանգուր մագերը, ձեռ-
քերը դրաւ կողքերին և սիդանեմ չտիփաւոր քայլերով սկսեց
սլոտել դահլիճում, ինչակս մի սպիսակ կարաւ:

— Կեցցես, Գալիա, կեցցես, կեցցես դու,—գովեցին կըտ-
րիձները, երբ Գալիան բոլորովին կարմբած կանգնեց սպարի
կիսում, արագ վագեց բնիւաւ հօր գիրիը, ամժանելով թագնեց

հօր թանգագին կարմիր մահուցի վերաբիուի լայն ծալքերի
մէջ և այնտեղից չարաձձիկ աչքերով նայում էր, որ տեսնէ թէ
իր աւարը գուց եկաւ հերերին, թէ ոչ:

— Ասա, Գալիա ջան, թագնելին ինչ է, ասաց հայրը,
— վեր առ աղեղն ու մի նետ ձգիր:

Աղջիկը Ճարպիկութիւնով քաշեց լարը, նշան առաւ պա-
ախ վրայ կախած եղչերի գլուխ աչքին ու արձակեց նետը. . .
Նետը խրւեց եղչերի աչքի ու մոսի մէջ:

— Այ կեցցես, Գալիա. Ենչ զարմանալի Ճարպիկութիւն,
լաւեց ամեն կողմից:

— Երեխիս շատ երես կըտաք, ասաց Բօսլաւը Ժամատով.—
քենելու ժամանակ է, Գալիա. դուք էլ, իմ կտրիձներ, աւել պա-
կասը ներեցէք երեխայիս:

Գալիան խոճարհ գլուխ տւաւ կտրիձներին ու շփոթւած
նրանց անընդհատ գովասանքից, ամօթից շառագունած, ինչակս
վարդ, վագեց դէսկի իր ննջարանը:

III.

Հետեւեալ առաւոտ Գալիան սովորսկանից ուշ վեր կա-
ցաւ անկողնից և գուրա եկաւ պատշգամբ: Նրա գայեակ
սպաւու Օքստնան գնացել էր ջրհորից թաքմ ջուր բերելու,
իսկ աղաւինները ամեն մէկը մի կողմն էլն ցըւել, գնացել:
Աղջիկը մենակ կանգնած էր և թոյլ թոյլ յօրանջում էր ու
հապիկուում:

— Ինչու դայեակս այսպէս ուշացաւ, — մտածում էր նա.

—անտառ չըգնամ արդեօք, երևե առաւօսից շատ սունկ կըլինի այնաեղ . . .

Այսպէս մտածելով արագութեամբ ցած վազեց սպառշգամբից և անհետացաւ անտառում: Ինչպէս զով է, ինչպէս կանաչ է չորս կողմը, քանի տեսակ՝ մժեղներ կան: Գալաս արագ ցատկում էր մի թումբից միւսը. սանամանները նրան խանգարում էին, հանեց սանամաններն ու կոխեց գատին և սկսեց ուրախ երգել: Այսուհետ մի սունկ էր գտնում, այնաեղ մի պաղահատիկ պոկլում. ազատութիւն է: Ահա և առւակից այն կողմ խկալան անտառը, ինչպէս մութն է այնաեղ, թաւ է, երկիւղալի է: Տեսնես ինչ կայ այնաեղ, գնալ, տեսնել. բայց դայեակը հրամայել է այն կողմը չըգնալ, այնաեղ գաղաններ կան, ասում է, որը մոլոր ձանապարհներում կարելի է կորչել. . . հիւրիներ կան այնաեղ . . . Բայց ինչպէս լաւ կըլինէր տեսնել: Գալիան կանգ առաւ առւակի առաջ, մտքի մէջ տատանելով. բռնել էր ընկուզենու ճիւղն ու աչքի տակից նայում էր մութ թաւ անտառին:

—Դայեակը արգելել է, հրամայել է չըգնալ, —կըլինում էր նա մտքի մէջ ընկուզած, բայց յեսոյ յանկարծ վճռեց, — գնալու եմ, ինչ կուպէ թող լինի, —ասաց ու արագութեամբ թռաւ առւակի վրայից:

—Իմանալու է պառաւը — մտածում էր Գալիան — է՛հ, գատարկ բան է, թող մի ժամ ինձ փնտրէ. ինչ կայ, ես այս լուպէիս յետ կըլառնամ, հէնց այսաեղ, մի քիչ անցնեմ նայեմ, տեսնեմ ինչ կայ այն կածանի ետեւ:

Գալիայն գեղեցիկ երեաց մութ անտառը. մեծ, հաստ ծառեր, որ երկու մարդ չեն կարող գրիել, փափուկ ու գալար

մամուռ, այնպիսի խիստ թիկեր, որոնց միջից դժւար է անցնել. բայց ինչ լաւ է թիկերի մէջը պատելով անցնելը . . .

—Այ, այս բառէին կըկերագառնամ — մտածում էր աղջկեր — հէնց միայն նայեմ թէ միւս կողմն ինչ կայ: Բայց միւս կողմն էլի միեւնոյնն էր, էլի հարթերամենայ ծառեր, էլի կանաչ փափուկ մամուռ . . .

—Բաւական է, առն գնալու ժամանակ է, մտածեց Գալիան և յետ դարձաւ: Երկար ժամանակ նա թափառեց աջ ու ձախ: ուղղութիւն էլ, ծուռ էլ գնաց, բայց առւակը չըկար ու չըկար: Գնում է, գնում, ոտերը մինչև անգամ թուլացել են, բայց էլի շալունակ անտառումն է. կածանն էլ է կորել, մարգագետիններն էլ:

„Մոլորել եմ,, մտածեց Գալիան ու նստեց:

Նա չըգախեցաւ, բայց այնպէս, մի անսակ դարձաւ:

Ուր գնալ, քաղցած էլ է, շատ էլ ժամանակ է անցել:

—Ավ գիտէ առնն իմացել են. հայրեկը ուրիշ անդ է գնացել, թէ չէ նա ինձ շատ շուտով կըգանէր: Դայեակս երեւ լաց է լինում . . .

Գալիան կըկին սկսեց թափառել առաջ ու յետ, բայց էլի անտառ . . .

—Յանկարծ ծառի ետեւից մի արջ գուրս գայ, կամ վայսի եղ, կամ վարագ, — անցնում էր Գալիայի մտքով. նա չորս կողմը նայեց, բայց անտառը խաղաղ էր, միայն տերեւներն էին շենքնում և մժեղները զժվժում մամուռի մէջ:

—Աշ, գագանները այժմ գնացած կըկին անտառի խորքը, այ, ձմեռը ուրիշ բան է . . .

Գալիան կըկին սկսեց գնալ և այս անգամ դուրս եկաւ մի

քնդարձակ մարգագետին: Այստեղ, ծառի առակ նատած էր մի աղջիկ, որ ասար ապրեկան կը լինէր, նու գունաթափ էր ու կապոյտ աչքերով: Աղջիկը ևս ցրւած խիտ ծաղկեզը ծամ էր անում, նբա ծնկների վրայ ընկած էր մի առակ հիւսած անտառի ծաղկեներից ու խոտերից:

— Հետք է—մտածեց Գալիան ու երկիւղից մնաց կանգնած: Բայց Գունաթափ աղջիկն էլ Գալիալից պակաս ըրվախեցաւ, նա վայր ձգեց պատկը, տեղից վեր թռաւ ու սկսեց վախչել: Գալիալի երկիւղն խօսյն անցաւ:

— Այս ինչ „հերի“, է որ ինձանից վախչում է, մտածեց նա, ինքն էլ վաղեց նրա եռեկից ու գուաց.

— Այ աղջիկ, աղջիկ, ուր ես վախչում, սպասիր:

Աղջիկը կանգնեց:

— Ես մոլորեւ եմ, ցոյց առւր ինձ ձանապարհը, խօսեց կրկին Գալիան:

— Ինչպէս թէ մոլորեւ ես, միթէ ձանապարհը չես ձանչում, հարցյրեց աղջիկը:

— Ես ամենենին չեմ եղել այս անտառում, դայեակս ինձ արգելում է այստեղ գտն. իսկ այսօր սիրտա այսուհետեղ, այնպէս որ . . . եկայ . . .

Աղջիկը աչքի տակով ծուռ ծուռ նայեց Գալիալի վրայ:

— Սիրագ ուզե՞ց, միթէ դու չես սիրում դայեակիդ, չ՞ ով նա այժմ քեզ փնտրում է . . . Գալիան բոլորովին ամաշեց, նա գլուխը խօնաբեցըրեց ու լռեց:

Տասը բոպէից յետոյ նբանք հասան մի ուրիշ մարգագետին, որի վրայ շնուած էր մի խրձիթ ծառի ոստերից և մամուռից:

— Միթէ այստեղ էք բնակւում, գարմանքով հարցյրեց Գալիան:

— Այո:

Ներս մտան: Նըսնց դիմաւորեց մի բարձրասասուկ սպիտակ մազերով ու երկար մօրուքով ձերունի:

— Հայրեկ, այս աղջիկը մոլորեւ է ձանապարհը, ես էլ այստեղ բերի, ծերունին տնառից նոր հւեցին:

— Դու սրաեղից ես, որդեակ, քնքշաբար հարցյրեց նա:

— Պալատից, պատասխանեց Գալիան:

— Ծնողքներգ ով են:

— Խօ հայրս Ռօսլան է, նա իշխան է, ամենքը նրան ձանաշում են . . .

Ծերունին լրեց:

— Ապա այս լինչակս եզաւ, որ դու ընկար մեզ մօս անտառը:

Գալիան պատմեց:

— Ե՞, որդի, ինչպէս երևում է դու գիշերս մեզ մօս կը ընսա, վոթորիկ է լինելու: Ուտել չ՞ս ուզում: Աննա, գրան մի բան տուք ուտելու:

Փոքրիկ տանտկրուհին բերաւ մեզը, մի կտոր հաց և ջուր: Գալիան սկսեց ուտել: Փոթորիկն անտառին չըհասաւ, ծերունին անկց դուքս եկաւ Գալիալին ձանապարհ ձգելու:

Աննան էլ նըսնց հետ դուքս եկաւ:

— Գիտե՞ս ինչ կայ, որդեակ, առաց ծերունին Գալիալին, դու մեզ մօս ես ընկել անսալուկի կերպով, բայց մեր մասին ոչ ոքի ոչինչ չտսես, թէ չէ մեզ ոսող ձեռով կըկողցնես:

Գալիան սարսադիեց:

— 12 —

— Լառ, պասպի, ինչո՞ւ ես դու մարդկանցից վախենում. դու կախարդ ես, վհուկ ես:

— Ո՞չ, որդիք, ես քրիստոնեայ եմ, պատասխանեց նա դառն ժպիսով. եթէ մէկն իմանաւ ի՞մ տեղը, ինձ կըսկսեն հալածել ինչպէս վայրենի գաղաճի:

— Քրիստոնեայ . . . — մաածմունքի մէջ ընկած կրկնում էր Գալիան, —ուրեմն դու յոյն ես:

— Ո՞չ, ես այսոեղացի եմ, բայց Յունաատանում եղել եմ և յունարէն հասկանում եմ:

— Ապա ինչո՞ւ ես ասում քրիստոնեայ, պատմիր, պասպի արդ լինչ է նշանակում:

— Երկար կըմինի, որդեակի, դու չես էլ հասկանաւ:

— Կըհասկանամ, պասպի, բոլորը կըհասկանամ . . .

— Բո տուն գնալու ժամանակն է, Սյնաեղ քեզ սպասում էն . . .

Բայց Գալիայի աչքերը փալում էին. այսուեղ մի բան կար, որ լինքը չգետէր և նաև ցանկանում էր ամեն բան իմաստ, ամեն բան հասկանալ:

— Պասպի, այ պասպի . . .

— Ի՞նչ է, որդի ջան:

— Թոյլ տուք որ կըկին քեզ մօտ գամ. հը՝, թոյլ կըսամս. ես այժմ լաւ կըգտնեմ ճանապարհը ու միսա կըսահեմ . . .

Ծերունին վախեցաւ:

— Ի՞նչ ես ասում, դու ինչո՞ւ համար պէտք է գաս այսուեցք, Մեր գլուխն զժբախտութիւն կըբերես . . .

— Ո՞չ, պասպի, ես կառաց, ժածուկ իրգամ, ես ոչ ոքի, ոչ ոքի չեմ ասել . . . Սյն ժամանակի դու ինձ կըսրատմես, համ, պասպի:

Ծերունին ոչինչ չըպատճամեց, նա միայն արագացրեց եր քայլեցը, յոյս ունենալով որ Գալիան միւս անգամ մոռացած կը լինի ճանապարհը:

— Ահա, այս էլ քո առւակը. այժմ դու տանն ես, մնաս բարով, ասաց ծերունին, և շուակով հեռացաւ դէպի անտառի խորքը Անհայի հետ:

Տանը Գալիային փնտըում էին, վազվում էին ու գողգոռում: Նա ասաց որ անտառում մոլորեւ էր, բայց ծերունու և նրա աղջկայ մտախն մի խօսք էլ չասաց:

IV

Անցաւ մի օր. Գալիան չէ կարողանում նստել սենեակում, աղջկիների հետ լաւագու ցանկութիւն չունի. նրան չեն ուրախացնում ոչ սլքուն աղանիները, ոչ սրաթեւ բագէն, ոչ կատուն իր ծագուկներով. մի բան նրան քաշում է գէպի անտառ, քրիստոնեաների մօտ, բարեսկըտ, հանդարս Անհայի ու ծերունու մօտ . . .

Օր տաք էր: Յուրաքանչին դադարեւ էր, որի մէջզգակի էր սեպտեմբեր ամսւան ուշացած ամառը:

Գալիան վերկացաւ գեռ լոյսը չըբացւած և վճռեց որ անպատճառ գնայ անտառ: Վչօրին մօտ Օքսանան ննջեց: Գալիան իր ստրիուհիներին ուղարկեց մէկին պտղահատվելիների ետելից, միւսին սունկի, երրորդին ձուկ որսալու կամ հէնց այնպէս, մանգալու: Աղջկիներն ուրախ-ուրախ վազեցին ամեն մէկը մի կողմ, բայց ամենից աւելի ուրախ էր Գալիան: Նա ապաս

շունչ քաշեց և գնաց առն եռեկ գաւիթը, որտեղ գտնւում
էին գոմելըն ու ախոռները:

—Ե՞ւ Գայլմա, էհէ, կանչեց նա:

Ավոտի եռեկ երեաց մի թխագոյն աղջիկ յօնքերը կե-
տած:

—Ասա հօրդ որ ինձ համար թամքէ „Աւշուբին“. շուտ,
այս բազէիս:

Գայլման աներեւթացաւ ախոռում:

Գուրա եկաւ խօժուապէմ սարուկ Խօժին, Գայլմալի
հայրը: Նա աչքի ասկից նայեց Գալիսին և ծոյլ ծոյլ գնաց
ձին բերելու:

Դալիսն չէր կարսկանում համբերել, ժամանակը նրան
շատ երկար էր թւում, մէկ երկու անգամ անհամբերութեամբ
ուր գետին խփեց և այնպէս խլեց մտրակը Գայլմալի ձեռից,
որ նա երկիւղեց դէպի յետ ցատկեց, վերջապէս չըհամբերեց Գա-
լիսն և Գայլմալին ուզարկեց որ հօրը շտապեցնէ:

Ահա „Ուրսուբն“, արգէն թամքած է: Գալիսն ցատկեց
նաև գորգեց կտրտծ թամքի վրայ, ձիու սանձը թափի տւառ
ու ձին քշելով ասաց Գայլմալին:

—Եցր դայեալս զարթնի, ասա որ ես մտն գալու գնացի,
երեք ժամից յետոյ կրվերագառնամ:

Գալիսն քշեց իր ձին լայն ճապանարհով մինչև երկու
վերսա: Յանկարծ ձիու գլուխը ծռեց և սկսեց քշել դաշտերի
ու մարգատեմնների միջով դէպի անտառ: Ահա և փոքր
անտառը, ահա և առուն. ձին հեշտութիւնով ցատկեց նրա
վրապէց և մի վայրկեանից յետոյ Գալիսն գտնւում էր ան-

տառի թաւում: Այսուեղ նա իջաւ ձիուց, նրա սանձը վա-
թաթեց ծառին և ինքը գնաց կածածով:

Մեծ ուշագրիւթեամբ. նա հետեւում էր իր արած նշան-
ներին, առաջ էր գնում հանդարա և զգուց, որ չըմոլորւի . . .
Վերջապէս հասաւ մարգագեանին, որտեղ գտնւում էր խրճիթը:
Դուռը ծեծեց: Գուռը բացաւ Աննան. խրճիթի մէջ ուրիշ ոչ ոք
չըկար:

—Հայրդ մւր է, հարցըեց Գալիսն:

—Զուկ որսալու է գնացել, երեկոյեան դէմ միայն կրվե-
րագառնայ . . . Աննան զարմացած նայում էր Գալիսի վրայ
և երեւում էր որ ուրախ էր նրա գալուն:

—Մեղր կուանիս, հարցըեց նա: —Մեղր բերաւ, նստեցին մեղ-
րահացերի կողքին և սկսեցին զբուցը:

—Ի՞նչպէս էր զուք ասպաւմ այսպէս, մարդկանցից հե-
ռու:

—Են, թնձ կայ օր:

—Միթէ քո ժամանակդ ախուք չէ անցնում:

—Տիանը, ինչպէս թէ ախուք:

—Եյ, որ միշտ մենակ ես լինում հօրդ հետ:

—Բայց ես բան եմ շինում . . .

—Ինչ ես շինում:

—Ինչ եմ շինում: Բանում եմ, սովորում եմ, խազում եմ...

—Բանդ թնձ է:

—Այ թէ ինչ. խրճիթը կարգի եմ բերում, բացք եմ
անում, մեղուներ հաւաքելու եմ գնում, որ հայր քազաք ծա-
խելու է տանում, հօրդ և իմ շորեսը կարում, կարկատում եմ:

—Այդ բոլորը զու մեն մենակ ես անում:

— Բոլորը, վրաբերեց Անհան:

— Հա. ստացիվ որ սովորում էլ ես: Այդ Բնչ բան է:

— Այ, կարգում եմ, գրում եմ, հաշիւ եմ սովորում . . .

— Կարգում գրել, գու, քո աղջկի տեղովդ: Խոկի իմ հայրն էլ կարդալ գրել չի իմանում:

— Խոկ իմ հայրը յունաքն էլ գիտէ և լնձ էլ է սովորեցնում: Մենք միասին ամեն երեխոյ կարգում ենք Սուրբ Գերքը: Գալիսն քանի գնում աւելի էր զարժանում:

— Այդ Բնչ բան է:

— Այս, Գալիս, եթէ իմանաս, թէ ինչ լաւ բան է այդ բոլորը Ասածու մտախն է գրած, և մինքան, մինքան լաւ է գրած ...

— Ասածու մտախն, Բնչ Ասածու:

— Մեր Ասածու, որ այնտեղ է, վերև երկնքում, այս առելով Անհան մատր բարձրացրեց գէպի վերև: — Զեր ասուածները կուռքեր են, ասուածներ հօ չեն. նրանք վայսից շնած տիկնիքներ են, նրանք ոչինչ չեն կարող անել, խոկ մեր Ասածն ամեն բան կարող է, ամեն բան . . . — Անհայի երեսը այբում էր և աչքերը փայլում էին:

— Ի՞նչ, ինչ ասեցի՞ր, կուռքերն ասուածներ չեն. դու ասում ես, որ կուռքերն ասուածներ չեն, ուրեմն Պէտոնն էլ Ասուած չէ. Վէլէնն էլ չէ ասուած . . . Ո՞վ ասաց քեզ:

— Ինձ հայրս է ասել, բայց առանց նրան ասելու այդ բանը գոքերումն էլ է գրած և . . . բայց . . . դէ ձշմարիտ է, ես հաւատում եմ . . . ձշմարիտ է. — Կմիմաց Անհան:

Գալիսն ոյժ էր անում որ մի բան մտածի, երևում էր, որ նա մի բան ուզում էր հասկանայ, լոեց, լոեց և վերջապէս հեծկուաց, սկսեց արտասուք թափել:

— Ոչ, սուտ է, սուտ է, չեմ ուզում, ես չեմ ուզում ձեր Վասածուն, դու ինձ գլխից հանում ես, չեմ ուզում, չեմ ուզում...

Նա վեր ցատկեց տեղից, դէն ձգեց մեղրահացը, դուրս թռաւ խրճիթից և վազեց դէպի տան կողմը: Անհայի բերանը բաց էր մնացել, նա մտածմունքի մէջ ընկած երկար ժամանակ կանգնած էր տան շմբում . . .

V.

Անցաւ չորս տարի: Գարունն այս անգամ վաղ էր եկեղեցը մեծացել էին. գրեթէ ամեն օր անձը էր գալիս: Ընդգրածակ լճի վրայ կամուղ սահում էր նաւակը: Բարձրահասակ, թխաղէմ, մեծ-մեծ ու աչքերով, բաց ու համարձակ նայւածքով մի աղջիկ ճարավիկութեամբ թխալարում էր նաւակը: Ազ և ձախ սահում էր եղեգների և ջրի մնթացքով լողացող գերանների միջով:

Լճի չորս կողմը բուսած էին հարվարամեայ ծառեր. տեղ խուլ էր և վայրենի . . . Աղջիկը շատ արագ էր թխալարում ինչպէս երեսում էր շտապում էր. նաւակը ուզգեց նա դուրս ընկած հրաւանդանի ետևը, կանգնեցրեց ափի մօտ, թիերը հաւաքեց և սկսեց սպասել:

Շուտով ծառերի միջից խշխոց լսեց, կանաչ ձիւղերը բացւեցին և նրանց ետևեց դուրս նայեց մի աղջիկ, կարձահարակ, նիհար ու դեղնած դէմքով:

— Գալիս, այստեղ Բս, վախլախելով հարցուց ոտք դրաւ նաւակի մէջ:

— Բարեւ, Անհա . . . նրանք գրկեցին միհեանց:



— Այս հրտեղ ես այսքան ժամանակ. հրքան կարօտել
եմ քեզ. հօրս յօնքերը կիսուած է, անձեւն էլ մի կողմից ամ-
բողջ օրը գալիս է, սիրոս տիրում է, ձեռս էլ բան չէ բռնում:
Այնքան ուրախացաւ երբ քեզանից լուր ստացաւ. Գնանք մեր
առւն:

— Ո՞չ, կաց, պէտք է քեզ հետ առանձին խօսեմ—ասաց
Գալիսան, — Գիտես լինչ կայ, շուտով, մեզ մօտ պէտք
է կասարեն Սևէն կուռքի տօնը. մի ասաւ տեսնեմ, թէ ես լինչ-
ախ անեմ: Ես լինչախ գնամ մերոնց հետ, լինչախ տօնեմ ու
երկրագետ կուռքերին. մեղք չէ. . . Հը՞ , խօսիր, Անճա, լինչ
ես լուել:

Անճան նստած էր գլուխը կախ:

— Ա՞յս, Գալիս ջան, չպիտեմ ինչ ասեմ... հօրս հարցյուտ:

— Ո՞չ, դու ինքու ինձ ասա, քեզանից եմ ուզում լսել:

Ախը չէ որ ես այժմ քրիստոնեայ եմ ու միլուուած. մեղք է
չէ կուռքերի առաջ պար գալ, պսակներ հիւսել, խունկ ծխել
ու երգ երգել: Ոչ, ոչ, սպասիր, դու ոչինչ մի ասիր, դու ինչու
պէտք է ասես. այդ ես ինքս գիտեմ, գիտեմ որ մեղք է, լսում
ես, Անճա ջան. ոչ, ոչ, ոչ, էլ չեմ անի այս անգամ, ա-
մենելին չեմ համաձանի, թէկուզ լինձ սպանեն, թէկուզ այ-
քեն, կըսակ տան. պէտք է ասեմ հօրս, էլ չեմ կարող, ոյժ չու-
նիմ ծածկելու, չեմ կարող . . . ու Գալիսն հեկեկաց:

Անճան վախեցած գրիեց Գալիսին:

— Բաւական է, աղաւնեակս, վախենում եմ ես. բաւական
է, հանգստացիր. աղօթիր, կանցնի: Ես գիտեմ, որ մեղք է,
բայց, ո՛հ, ստրափում եմ. լսու, դու լինչախ կարող ես ասել
հօրը:

— Ի հարկէ կասեմ. լինչ կայ: Աւելի լսու է ասել, քան
լուել ու ծածկել: Անճա, հոգեակս, գրկիր ինձ, պինդ, պինդ,
այ այդպէս. համբուրենք ես ու գու, ամուր. թող լինի, ինչ
որ լինելու է, գուցէ մենք վերջին անգամ ենք տեսնուում:

— Ո՞հ, Գալիս, սարսափելի է, եկ աղօթենք միասին:

Աղջիկները դուրս եկան ափը, ծունկ չոքեցին ու երկար
ջերմ աղօթում էին, յետոյ կրկին գրկեցին միմեանց ու բաժան-
ւեցան: Թիվերի միջից մի խշոր լսւեց, նըանք երկուսն էլ վեր
թուան, ականջ գըն, բայց այլքս ձայն չըկար . . .

— Երեւ քամին է կամ առնէտ է, կամաց խօսեց Գա-
լիսն և վազեց գէափ նաւակը:

Գալիսի նաւակը հանդարտ սահում էր լճի վրայ. և
նըա գլխում գարլինել էին հին յեղողութիւններ.—ահա ար-
դէն երեք տարի է, որ կնքը քըստոնեայ է, մտածում էր ինքն
իրան, շատ, շատ բաներ է սովորել այդ աղքատիկ խըճթի
մէջ, այդ անտառի մէջ. վառ սիրով սիրել է աշխարհի Փրկիչ
Քըստոնին, ամբողջ սրաով նւիրւած է նըա աւետարանին. ջերմ
կապւած է նա ծերունի Անդրէի ու Անճայի հետ.—սրանք բա-
ցին իր առաջ ձշմարտութեան, բարւոյ և հաւատի լուսը . . .

„Խոկ համըս“, անցաւ նըա մտքով:— Ոչ, ինքը հօրն էլ է սիրում,
բայց այս ուրիշ բան է, ինչ էլ լինի իր նոր հաւատը
չի փոխիլ հօրնսիրոյ հետ. աւելի լսու է մեռնել, քան փոխէլ:

VI.

Երեկոյեան Ռօսլաւը գնաց Գալիայի ննջարանը: Գալիան
հստած ասղնեգործում էր:

—Թող այդ, Գալիա, գնա վաճառանոց, ընտրիր յոյ-
նի մօտ ամենալայլուն դոյնի կտոր քեզ համար,—ես ուզում
եմ որ իմ աղջիկս ամենից գեղեցիկ լինի երգիչների խմբի մէջ:

—Ինձ նոր հագուստ չէ հարկաւոր, հայրիկ, կամաց ասաց
Գալիան. ես չեմ գնալու, չեմ երգելու խմբի մէջ:

—Այդ ինչ է: Ի՞նչաչս թէ խմբի մէջ երգելու չես գնալ.
Նոր զգեստ էլ չէ հարկաւոր: Հիւանդ հօ չես, զաւակս: Ռօսլաւը
աղջկայ ծնօսից քնքութեամբ բռնեց, բաշճացընեց նրա երե-
սը դէպի վեր և շիրթւած միանց նայել նրա աչքեցին:

—Ոչ, հայրիկ, ես առողջ եմ . . .

—Ուշեմն էլ ինչ է պատահել քեզ, ինչու այդպէս տխուը
ես: Գալիա զան, հոգեակս, ասան, մի ծածկիր: Կարելի է քեզ
վշտացընել են. ոլ է քո քէֆիդ դիակել:

Գալիան լոեց, յետոյ արագ դէն ձգեց ձեռքի կարն ու
հեկեկալով ընկաւ հօր գիրկիը:

—Հայրիկ, հայրիկ, չեմ թագցնի, կասեմ. հոգիս մաշւել
է, էլ չեմ կարող . . .

—Ասա, ասա, աղաւնեակս, ասա, ցաւդ ինչ է:

—Յաւ չունիմ, հայրիկ, բայց շատ ծանը է ինձ համար
քեզանից թագցնել . . . Հայրիկ, թանգարին հայրիկ, մի
բարկանար ինձ վրայ, ես չեմ կարող երկարագել քո կուռքե-
րին—ես քրիստոնեայ եմ . . .

Եթէ այդ սուլէին Գալիայի գլմին քարեր թափւէին և
նրան ջարդէին Ռօսլաւի աչքի առաջ, այնքան չէր սարսափի
նա, որքան սարսափինց Գալիայի խօսքերից . . .

—Հայրիկ, հայրիկ, էլ ինչու ես լոել. գոնէ մի խօսք
ասա լինձ. ասա, որ սիրում ես լինձ,—ասում էր Գալիան վորձե-
րով գրկել հօրը, բայց հայրը բռնեց Գալիային և դէն ձգեց:

—Կորիթ, հեռու լինձանից: Զըմամարձակւես մինչև ան-
գամ մտածել ուրիշ աստւածների մասին, բացի նրանցից, որոնց
երկարագել են քո հայրերդ ու պապերդ: Կըլիակիմ քեզ սե-
նեակում, քաղցած կըմեռցնեմ, կըտանջեմ քեզ. ես չեմ
թոյլ տալ որ ինձ վրայ ծիծաղեն: Այս ասելով նա ծանը քայլերով
դուրս եկաւ ննջարանից:

Գալիան ամբողջ օրը աղօթում էր, լաց էր լինում, կոտը-
տում էր ձեռնեթը. բայց երեկոյեան դէն նա հանգստացաւ,
մի բան վՃռեց մտքում ու պառկեց քնելու:

Օքսանան ինչպէս մի սուեր պտտում էր Գալիայի չորս
կողմը, գլուխը շարժում էր, թելիսմներ էր ասում քթի տակ, օրէ-
նած ջուր էր սրսկում, մահձակալի տակ զանազան խոտերով
լիքը գաւաթ՝ էր գնում. նա երբեմն երբեմն նայում էր Գալի-
այի անկողնին, բայց Գալիան պառկած էր անշարժ, աչքերը
վասկ—քնած էր:

Յանկարծ դուռը ճռուաց, Ռօսլաւը հանդարտ, ոտերի
ծալիին մանգալով մտաւ ննջարանը և մօտեցաւ անկողնին:
Գալիան քնած էր երեսում: Հայրը կուացաւ դէպի նրան և սկսեց
երկար նայել աղջկայ երեսին:

Օքսանան ոտերի ծալիով մօտեցաւ նրան և ասաց կիսաձան-

—Իմ եշաան, հրաման տուը մի խօսք ասեմ, յետոյ ուզում
ես գլուխ կտըեք . . .

—Ասմա, պառաւ:

—Ես իմացել եմ թէ ով է մեր աղաւնեակին ճանապար-
հից հանել . . .

Թօսլաւը ձեռքով բոնել էր դաշոյնի կոթը և անգիտակ-
ցաբար սեղմում էր:

Գալիան տեղուտեղը սառեց. նա քնած չէր և լում էր
ամեն բան:

—Խօսիր, շուտով, խօսիր . . .

—Այս առաւտու . . . մեծ անտառում... մեր Գալիան . . .
տեսնեց մի աղջկայ հետ, որ անտառումն է կենում . . . այն-
տեղ մի ծերունի ևս կայ . . . խօսք են կապել որ սա չըգնայ
խմբի մէջ երգելու . . . ես թագնւել էր. ծերունու . . . հետքը
պահեցի ու հիմի տեղը գիտեմ:

Թօսլաւը լուեց. Գալիան լսում էր հօր ծանր շնչառութիւնը:

„Փոթորիկ է լինելու“, մտածեց նա:

—Դէ լաւ, պառաւ, ասաց Թօսլաւը, պառկիր, քնիր ու
տու կաց, թէ չէ . . .

—Այս ըոսէիս գան ինձ մօտ կիւտ ու Նըրօկ . . . Լու-
սաբացին ճանապարհ պէտք է ընկնենք, բարձրաձայն հրա-
մայեց նա սանդուխքների վրայ սպասող ծառային:

Գալիան գողաց: Կիւտ և Նըրօկ իր հօր բագէակիւներն
էին և գազանի նման կրտտաղի . . . Ախ, ինչ է ուզում անել,
մտածում էր Գալիան և սպասում էր որ Օքսանան քնի: Օքսա-
նան էլ թարսի պէս չէր քնում, այս կողքից այն կողքն էր
շուռ գալիս, տնքոնքում էր, վեր էր կենում, մօտենում էր

ծածկելու Գալիային, որ շարունակ գողում էր: Վերջապէս խը-
ռըմիոյը ձգեց:

—Այժմ ժամանակն է, ասաց ինքն իրան աղջկին ու տե-
ղոյը վեր կացաւ: Միտքը շփոթւում էր:

—Լուսաբացին . . . Ի՞նչ անեմ, ինչպէս անեմ: Գուբը
թաց է, անձրեւ ու քամիթ... Բայց հարկաւոր է, պէտք է . . .
Ողջումաքիրս, ծերունի պասլիս, դուք՝ իմ հարազատներ, իմ
սիրելիներ, եթէ իմանայիք թէ ինչ վտանգ է սպառնում ձեզ...
Տէր Ասուած, սիրտ տուր ինձ, ոյժ տուր ինձ ազատել նրանց,
Դու հօ ամեն բան կորող ես անել:

Նա շուտով հագնեց, ինչպէս սուեր ծածուկ գուբս եկաւ
տան ետեւի գաւիթը. Հներն ուզում էին հաշել, բայց Ճանաչե-
լով Գալիային, մըմուլով յետ գնացին: Քամի էր, մանր
անձրելը մաղմղում էր, նրա սուերը ցեխի մէջ կորչում էին . . .

Ետեւի պատշգամբի տակ երեք թամքած ձի կանգնած
էին. ձիապանը երեխ գոմն էր գնացել:

—Այ, ինչ լաւ կըլինի, եթէ ձիով գնամ,—մտածեց
Գալիան — կարելի է մինչեւ լձի մօտ քշել ևսկ այն-
տեղից նաւակով... Բայց այսուեզ գմիսի կընկնին . . . Է՛հ, մէ
և նոյն է, շատ հարկաւոր է թէ կիմանան, ինչ ուզում է թող
մնի . . .

Զիու սանձը արագութեամբ ձգեց, դարձեց ձին ոէպէ
ցանկապատը, քաջ տղամարդի պէս ցատկեց թամքի մէջ
տեղը, ասպանդակները խիեց ձիու կողքելն և ինչպէս նետ
սլացաւ ոէպէ գալու . . . Զիու սմբակները միակերպ զմիում
էին կակուղ ցեխի մէջ. մթութեան մէջ նշմարւում էին ծանօթ-
տնակները, խըճիթներն ու ճանապարհը:

VII.

Եսք Գալիան հասաւ խրձթին, ծերունին ու աղջիկը գեռքնած էին:

—Գալին, հոգեալս, այս ժամանակ . . . բացականչեց Աննան, —այդ լինչ է քո երեսիդ հալը. լինչ է պատուհել . . .

—Փախէք, փախէք շուտով, խեղդւելով ասաց Գալիան, ազատեցէք, հայրա իր մարդկանցով գտվս է այսանդ, ի՞մ դայեալս ձեր հետքը պահել է: Շնուտ, շուտ... և նա թուլացած ընկաւ թախտի վրայ:

—Ապա դժունչ ես անելու, տարակուսած հարցրեց Աննան. Նա խօրոյն հասկացել էր ամեն բան և նրա սիրութ ցաւից ձընշւում էր:

—Մի մտածեր, ինձ համար դու մի մտածեր, քոյրա, սիրելս, դու հայր ունիս, նրան պահպանիր. փախէք, քանի ժամանակ կրայ . . .

—Դու էլ փախիր մեզ հետ . . .

—Ոչ, Բոսլաւի աղջիկը չե փախչել իր հօր բարկութիւնից, աւելի լաւ է մեռնել . . .

Աղջիկը ուղղեց, նրա շթունքները սեղմւում էին ու աչքերը կրակի պէս փայլում:

Մի քանի ըստէից յետոյ հայր ու աղջիկ պատրաստւեցին փախչելու, ծերունին օրհնեց Գալիալն, Աննան կալսւել էր նրա վկց ու չէր կարողանում բաժանել:

Գալիան նրան շուապեցնում էր.

—Աննա, հոգեալս, սիրելս, եթէ ինձ սիրում ես, շնուտ արա, ինձ մի տանջիր . . . Նա իր ձեռքավ նրան հեռացրեց

իրանից ու կիսամեռ դրութեան մէջ յանձնեց հօրը, երկու սը միասին աներեւութացան անտառի լսորքում: Գալիան երեսը խաչակնքեց ու ազատ շունչ քաշեց:

—Իսկ ես —ակամայ մտածեց նա —էլ կըտեսնեմ նըանց... Ոչ, իմ օրերս համարւած են, բայց կարելի է և բոպէներս...

Գալիան նստեց թախտի վրայ, կոթնեց ձեռքերին ու սպասեց: Երկու ժամ անցաւ: Հեռւից լուեց ոտնաձայն, որ քանի գնաց այնքան մօտեցաւ, վերջապէս լուեց աղմուկ...

—Գալիս են, —մտածեց Գալիան ու թախտից եջաւ: Դուռը ձեծեցին. լուեց Բոսլաւի հզօր ձայնը.

—Ե՞ս, դուռը բացէք:

Ներս մտաւ Բոսլաւը, նրա ետելից կիւտ և նըրօկ, յետոյ քրսանան: ԱՅենքը մնացին քար կտրած:

—Գալիա, աղջիկս, այս լինչ է նշանակում, —որոտաց Բոսլաւը և նրա յօնքենը կիստեցին:

—Մի բարկանսը, հայր, հաստատ և պարզ խօսեց աղջիկը, —արան, ինչ ուզում ես. ես միայն ազատել եմ իմ բարեկամներիս և դուք էլ նրանց ետ ելոց չէք հասնել . . . Ուզում ես իմ գլուխս կտրել տուր, ուզում ես տանջիր, միայն իմացիր, —ես հոգւով ու իմ բոլոր մտածմունքներով քրիստոնեալ եմ. դու իմ հոգու տէրը չես, թէկ իմ հայրս ես . . .

—Շնորհակալ եմ, աղջիկս, լաւ ծիծաղեցիր դու քո հօր ու պապերիդ հաւատով վրայ. . . առանց իմ կամքը հարցնելու, դու փախար տնից, որ իմ թշնամիներիս ազատես. —վահ, այս էնչ բան է. սրանից աւելի էնչ խայտառակութիւն կըմինի իմ սպասակ մտպերիս համար: Էլ ալսուհեաւ դու իմ աղջիկը չես. Էլ չեմ ուզում քո ամօթահար երեսը տեսնել: Պատրաստութը

գլխատւելու, իսկ առայժմ՝ կը փակեմ քեզ ասպարանքում, էլ չենք տեսնել քեզ հետ:

Սարսուեց Գալիան, աչքերը մթնեց, Օքսանան ճշաց, գըր-
կեց իր աննման սանիկին և բազէակիրների հետ դուրս տա-
րաւ նրան խըճթից:

VIII.

Դառն արտասուքով ողողում էր Օքսանան իր անկողինք:
Գալիան նայեց, նայեց և խղճաց իր դայեակին:

—Բաւական է, մայրիկ, լաց մի մինչը, միւնոյն է. եթէ
դու հօրս չասէիր, ուրիշներն էին ասելու, ես դարձեալ քավտի
կարողանայի նրա բարկութիւնից ազատուել:

—Իմ աչքի լոյս, չեմ իմացել, չեմ հասկացել. հէնց կար-
ծեցի, թէ քեզ համար լաւ բան եմ անում. խելքս չըկտրեց
թէ քո հայրէ, այդ կատաղի գազանը իր հարազատ որդուն
չի խնայի . . .

—Լուր մայրիկ, շոյեց նրան Գալիան, ես երկար չեմ ապ-
մուլու: Աւսէնի տօնին երկու օր է մնացել, գլտեմ, որ ինձ նրան
կը զոհէն... կարելի է դեռ աւելի շուտ . . . վերջին անգամ
ինձ ուրախացրու, ինչ որ խնդրեմ, կատարիր . . .

—Ասա, հոգեակս, ամեն բան կանեմ քեզ համար . . .

—Իմացիր, տես նրանց լինչ է պատահել. արդեօք կա-
րողացան թագնւել, թէ չէ. կենքանի են, թէ չէ. հասցըու
նրանց իմ վերջին խաբարս:

—Այն բարբարոսները, այն կախարդները, այն որ քեզ

կախարդեցին ու կրցըին իմ աննման երեխային: Թող փթեն
նրանց սկզբները, գրողը տանի նըմնց:

—Բաւական է, մայրիկ, նրանք բարբարոսներ չեն, ոչ էլ
կախարդներ. նրանք բարի մարդիկ են. եթէ ինձ սկզբում ես,
նրանց մի անիծիր. մտածիր, որ ես քեզ հետ անց եմ կացնում
իմ կեանքիս վերջին օրերը . . . :

—Թող քո ասածը լինի, հոգեակս, թէ եւ նրանք ինձ հա-
մար ասեմի են, բայց չեմ կարող ես քո խաթըգ կոտըել:
Կը գտնեմ նրանց—անսպիսաններին, ամեն բան կիմանամ, ինչ
որ դու ուզում ես իմանալ, քեզանից խաբար կըհասցնեմ այդ
շարագոթներին . . .

Գոլիան կենդանացառ և կալծես թէ ուրախացառ: Նա
շուտով իր շապկից մի կտոր քաթան կտրեց, նրա վրա մի քա-
նի տող բան գրեց վաւարի կտորով, որ նա թաթախում էր
սպակի միջի մութ հեղուկով: Հազիւ արշալոյսը ցուլաց, Օքսան-
նան արդէն կատուի աէս կուշ-կուչ անելով անտառի միջով գնում
էր, նայում էր կածաններին, շուտ-շուտ յետ իր նայում. նա գլուէր
արդէն, որ ամեն կողմ ձիաւորներ են ուղարկւած քրիստոնեա-
ներին վնարելու և դեռ նրանցից ոչ մինը չէր գտել նրանց
հետքը: Նա անցաւ բոլոր կածանները, կանգնեց թաւուտի
մէջ, չորս կողմը նայեց, կարծես մի բան եկաւ խելքին, ծուեց
ուղիղ գէպի աջ և գրեթէ վագում էր մարդագետնի ձահճային
հողաքոէչների ու առւակների վրայով . . .

—Ինչպէս խելքս չըկտրեց առաջուց, մըթմըթում էր նա
ինքն իրան—պատաւել եմ, չեղողութիւնս էլ խանգարել է:

Խիտ անտառում, ձահճնների միւս տիփին բարձրանում
էին մի շարք ցած տիրատեսիլ բլուրներ. մի կողմից գրանք

իջնում էին դէալի հովիսը թեք լանջերով, միւս կողմից գեք կտրւածքով կախում էին անդունդի վրայ, որի մէջ վշշում էր սրբնթաց, կապտագոյն առւակը: Ազդուղի Գիտի անց քըն էր, կախարդական աշխարհ, որտեղ—ինչպէս հաւատում էր ժողովուրդը—առաջում էին հիւրիներ և մարդագայլեր: Գիտի անցքի հէնց մէջտեղը երեւում էր մի նեղ զառիվայր ճանապարհ: Օքսանան համարձակ սողաց այդ անցքով, բռներով ծառելի ձևելերից ու բներից: Ներքեւում նա լուռ դիսեց չորս կողմը, խօնաւ կաւի վրայ ոտքի հետքեր նկատեց. կրացաւ, մի ըստէ լուռ դիսեց հետքերը և արագ գնաց դէալի այն կողմը: Կէս ժամից յետոյ նա արդէն կանգնած էր ցածլիկ քարայրի առաջ, որ աւելի նմանում էր կախած քարաժայռի մէջ քանդած լիուլ: Մուտքը ճարտարութիւնով ծածկւած էր վերեւոց կախած թփով և մամուռով, բայց Օքսանայի սուր աչքերից չըթագնւեց և նա սողալով ներս մտաւ այդ նեղ ծակը: Փոքրիկ, կէս խաւար խուցի մէջ կանթեղի թոյլ լոյսի առաջ նստած էին Անդրէն ու Աննան:

Անդրէն կռացած էր գրքի վրայ, խիլ Աննան կռթնել էր արմունկի վրայ ու մտածմունքի մէջ ընկած նայում էր առկայծող լոյսին:

Օքսանային նկատելով նրանք երկուսն էլ վեր թռան:

—Մի վախենաք, ասաց նա, թէկւ դուք մեզ թշնամի էք, բայց ես վրէժինդրութիւնով չեմ եկել ձեզ մօտ. ինձ ուղարկել է իմ Գալիան, իմ թշւառ երեխաս: Ահա այս էլ ձեզ նսմակ նրանից:

Աննան շտապով խլեց քաթանի կառը, աչքի անցընեց նրան և բացականչեց.

—Հայրիկ, հայրիկ, իմ Գալիակին ուզում են գլխատել . . .
—Անդրէն սարսեց: Խնչպէս կայծակ անցաւ նրա գլխեց այն միտքը, թէ ինքն է մեղաւոր Գալիայի մահւան մէջ, որ չըկարողացաւ նրան սպահանել, ինքը փախաւ վտանգից՝ մի-այն իրան համար մտածելով . . .

Տեղից վեր կացաւ, բայց կըկին ալինդ վայր ընկաւ վայտի կոճղի վրայ, որի վրայ նատած էր:

Հարց ու վորձ արին Օքսանային. նա էլ անմխմթար արտասուբնելով պատմեց ամեն բան: Աննան էլ աւելի սպառունեց, նրա աչքերը մի տեսակ մեծ մեծ բացւեցին, կարծես թէ նա իր աչքերի տուաջ մի սալասիելի բան էր տեսնում . . .

—Հայր, ես չեմ կարող նրան ալդպէս թողել—ասաց նա կրամաց, բայց հաստատ,—օքսանիր ինձ, հայր, ես կըգնամ նրա մօտ, կըմեռնեմ նրա հետ . . .

Անդրէն լռեց, յետոյ բերանը բաց անելով կարծես մի բան էր ուզում ասել. բայց ինչ որ նա զգում էր, խօսքերով չէր կարելի ասել. նա լուռ ծունկ չոքելով միսեց զերմ աղօթել:

Օքսանան այդ սոսէին մոռացաւ, որ իր առջև քիվստոնեաներ էին, որոնց նա մի քանի ժամ առաջ անիծում էր. նա մի բան էր տեսնում՝ որ այդ գունաժամի աղջիկը ուզում էր գնալ սարսափելի, անխուսափելի մահւան առաջ: Խեղճը եկաւ:

—Դադարիր, աղջիկ, ասում էր նա Աննային: Ինչո՞ւ ես գնում մահւան դէմ. քեզ հայր ունիս, ինչպէս կըթողնես նրան: Աննան հառաչեց.

—Թող ինձ գլխատեն Գալիայի հետ միասին, մեր հաւատը մեզ սովորեցնում է չըվախենալ մահից, խիլ եթէ Գալիան ինձ հետ միասին լինի, նրա ցաւը կըթեթեսնայ:

Օքսանան նրան լոռւմ էր և հիանում:

—Մերունի, ասաց նա Անդրէին, մթթէ որ այս թշւառին կըթողնես որ գնայ մահւան հանդէս:

—Այս, կըթողնեմ, թող անչ այնպէս, ենչաէս իրան սկըտ իրան սասում է. մենք մեղաւոր ենք որ ըսպաշտանեցինք Գալսալին. մենք փախանք, խնայեցինք մեզ, իսկ նրա մասին մեր հոգեակի մասին չըմտածեցինք . . . Գնան, աղջիկս, թող Ասուած քեզ օրհնէ. գնա նրան քաջալերիք վշտի ժամանակ ու մեռիք ճշմարիս հաւատի համար . . .

Նրա ձայնը գողաց, նա օրհնեց Աննալին, և երկար, երկար նրան պահեց եր գըլում:

—Ներիք, հայր, ասաց աղջիկը հանդարս:

—Գնա, որդեակ, երեւում է, որ Ասուած ուզում է մեզ փոքին, գնա և փառաւորիք նրա անունը . . .

Օքսանան չըդիմացաւ, նա սաստիկ խղճաց այդ մարդկանց:

—Ի՞նչ էք անում, գժւել էք. այդ տեսնւած բան է: Գիտե՞ս, ծերունի, լսիր, ախր նրանք չեն խնայի աղջկանդ: Եթք Գալսալին չըգեթացին, գրան կըսպանեն ու կըսպանեն, կայրեն, այնպէս որ գրա մի ոսկորը չի մնալ . . .

—Մեծ և հզօր է մեր Ասուածը, Եթէ նա չըկամէնայ, դրա գլխից մի մազ էլ չի պակասիլ, սակ եթէ գրան վիճակւած է մեռնել—սուրբ է նրա կամքը:

Հայր ու աղջիկ կըկին փաթաթւեցան միմեանց, աղջիկը հօրը գլուխ աւեց մինչև գետին և դուրս եկաւ Օքսանայի ետևեց . . .

IX.

Զընայելով որ գեռ վաղ առաւօտ էր, իշխանի ընդարձակ գաւթում ամենքը ոտի վրայ էին արդէն. հաստափոր բազէակերը հրամաններ էր տալիս մանկաւիլներին, ձիապանները ձիեր էին պատրաստում, խոհարարները թըլթըլսկացնում էին խոհանոցում, լսուում էր ընտանի թուչունների ձացը, որոնց երեկ մորթում էին, գաւթի միջից տանում էին ահագին սրբազն խոզը, որ սարսափելի կերպով ձգձում էր. . .

Օքսանան և Աննան ներս մտան սայլադունով:

—Այսօր շատ վաղ են վեր կացել ամենքն էլ, երեւում է, որ մեր ծերուկը որսի է գնալու, ասաց Օքսանան: Աննան վախվախելով նայեց չորս կողմը, նա երբէք այդքան ժողովուրդ չէր տեսած . . .

Նրանց պատահեց մի ձիապան:

—Այդ ուր էք ուզում գնալ, հարցրեց Օքսանան նրա կողքից անցնելիս:

—Որսի, ծոյլ ծոյլ պատասխանեց նա,—հրամայւած է, որ գլխատութիւնից յետոյ իսկոյն ամենքը հաւաքւած պատրաստ լինին:

Օքսանան կանգնեց կէս ճանապարհի վրայ և խիոյն երեսը դարձրեց դէպի ձիապանը:

—Ի՞նչ գլխատութիւն, ի՞նչ ես ասում:

—Ո՞նց թէ ինչ, չի՞ս իմանում ինչ է. այսօր քո իշխանուհի օրիւրդին տարան . . . մի ժամ կըլինի որ գնացել են: Երիտ կանայքն էլ ձացին.

—Ո՞ր կողմը գնացին, որտեղ է գլխասութեանը շոապով,
հարցնում էր Օքսանան գնալով:

—Աձեւ ափին, Պերունի կաղնու տակ . . .

Օքսանան և Աճնան վազելով դուրս եկան: Զիսապանը
նայեց նրանց ետևեց, ծոյլ ծոյլ յօրանցեց ու գնաց գէալի ձիերը:

—Վայ, բալաս, վայ իմ անձման երեխայ, շուշը կտրելով
ասում էր Օքսանան.—Լըսալանեն աղաւնեալիս. ես էլ չեմ տես-
նի նրա պայծառ աչքերը, էլ չեմ լսի նրա զիւ ձայնը . . .
Ախ, սիրսու գնում է . . .

Աճնան վազում էր նրա ետևեց ու երեսը լսաչակնքելով
աղօթք էր մրմնջում: Մեծ լճի ափին, այն լճի, որի մօտ
մի քանի օր առաջ տեսնում էին երկու բարեկամուհիները, բազ-
մաձեզ, հարիւրամեայ կաղնու տակ պատրաստած էր գլխա-
տութեան տեղը: Ժողովուրդը քանի գնում աւելանում էր: Հրա-
պարակի վրայ, ձիշտ կաղնու տակ կանգնեցրած էր մի մեծ կոճղ
և նրա վրայ դրած էր մի նոր փայլուն կացին:

—Քերում են, բերում են, լսեց ամբոխի մէջ:

Հեռւեց լսեց երգի ձայն և ձիերի ստերի դոփիւն: Ամեն-
քի առջեւց ձիով գալիս էր իշխանը, ոտից մինչեւ գլուխ սպիտակ
շրում, սպիտակ արծաթազարդ ձիու վրայ. նրա ետևեց, պատ-
գարակի վրայ բերում էին Գալիալին:

Գալիան նստած էր տխուր, գլուխը կախած, սպիտակ, հարթ-
շամիլը հագին: Պալատական աղջիկները գնում էին լուռ, վա-
խեցած, տխուր յօւսահատ երգը չէր յաջողւում. ձայները շուտ
շուտ ընդհատում էին հեկեկանքներով.—Գալիալին ամենքը
միշտ էին, նա ամենքի սիրած գրաւել էր:

Բօսլաւը սպառնալից դէմք էր ստացել, նա կիտել էր

յօնքերը. Երբ նա որոտալից ձայնով գոռաց. «Ճանապամըն բա-
ցէք», ամենքը սարսափեցին: Ամբոխը յետ կացաւ: Գալիալին
իջեցրին պատգարակից. նա կոթնեց կազնի ծառին:

—Ով մեծդղ Պերուն, սկսեց Բօսլաւը և նրա ուժեղ ձայնը
որոտաց խիտ անսատի մէջ, մէջ Պերուն, քեզ եմ մասուցա-
նում այս զոհը. սըրել ինձ և իմ ընտանիքը, իմ ազգականնե-
ր էս և բարեկամներիս նախատինքից և անպատութիւնից,
հայհոյանքից և ծիծաղից . . . Վըէժ և անէծք նրանց գլխին,
ով որ խից ինձանից իմ աղջկան. թող որոտան նրանց գլխին
կալծակ և շանթ, թող շրկաբողանան նրանք ազատուել քո
բարկութիւնից . . .

—Սպզիկս—դարձաւ Բօսլաւը Գալիալին—հրաժարվեր քո
անմտութիւնից . . . նրա ձայնը դողաց.—Իւիք որ գու եմ
միակ զաւակս ես... ջալիս, միթէ այգքան քարացել է քո սիրուր...

—Հայր, հայր, իմ թանգագին հայր, չէ որ ես քեզ սե-
րում եմ:

Հայրը ձեռքերով հեռացրեց նրան իրանից:

—Ուրեմն հրաժարվեր մոլորդութիւնիցդ, մոռացիր նրանց,
եղիքը իմ զաւակս:

—Ոչ, հայր, չեմ կարող. ով ոք մի անգամ ճանա-
չել է լոյսը, միթէ կարող է ուրանալ նրան, ասաց տխուր
օրիորդը:

Բօսլաւը գլուխը բարձրացրեց, նրա աչքերը փայլեցին, նա
նշան տխուր ծառաներին Գալիալի ձեռքերից բռնեցին, Բօ-
սլաւը վերցրեց կացինն ու յետ ծալեց իր լայն զգեատի թեւերը...

Զորս կողմը տիրեց մեռելալին լռութիւն . . . Յանկարծ
ողի մէջ լսեց յօւսահատ աղազակ և թրկու կանայք շնչա-

սպառ, գլուխները կորցրած պատռեցին ամբողիք և հասան գլխասման տեղը . . . Ամբողիք շուկ հանեց. Բովլաւը կանգ առաւ, Օքսանան և Աննան վազեցին Գալիսիք մօտ. Տաւանները ակամայ յետ քաշւեցին:

—Գալիքա, հոգիս, դու մզջ ես, ուրախ ուրախ մըմնջաց
Աննան, Ծօյաւր դիմեց գայեակին լսատը թեամբ.

—Օքսանա, այդ բնչ է քո արածք։ Աննան թողեց Գալիպին և իր մեջ մեջ կապուտ աշքերը ձգեց իշխանի աշքերին։ Նա գլուխը բարձրացրեց, աներկիւզ նայւածքով գիտեց ամբոխը, մօտեցաւ իշխանին ու հաստատ ձայնով ասաց,

— Իշխան, ես եմ այն քրիստոնեայ աղջկը, որ Գալիքալին
դարձը մեր հաւատին: Եթէ ձեզ օրէնքով Գալիք արժանի է
գլխատութեան, այն ժամանակ բոլոր մեղն իմո է . . . Ինձ
գլխատիր, Եթէ դու աչգաէս ծարաւի ես քրիստոնէի արեան,
բայց նրան մի կորցնիր . . . Տեսնում ես, լշտան, —ազաշում էր
նա ծունկ չոքած, —ես ինքս եմ եկել քեզ մօս, ես չեմ վա-
խենում մահւանից, քեզանից միայն մի գթութիւն եմ ինդըսում,
մի սպանիք քո գուռասը:

Անհայտ խաղաղ ու քնքուշ ձայնը, նրա գունաթափի կէս-
մանկական երեսը, նրա մեծ մեծ կապոյտ աչերը այնպէս ազ-
դեցին Յօսլաւի վրայ, որ նա ակամայ գուստը խոնարհեց: Մի
ինչ որ հեռաւոր անցեալ եկաւ նրա աչքի առաջ. այդ պայմա-
տող մանուկի ձայնից, Յօսլաւը չէր հասկանում, թէ արդեօք
այդ երան խաղաղ մանկական օրենքն են, սիրող մօր գգւանքն
է, թէ վաղուց մեռած սիրելի կնոջ ձայնն է . . . Հալեց նրա
սիրտը, զլուխը խոնարհեց հզօր կութքի վրայ, ձեռքը ցնցեց,
կացինը վայր ընկաւ:

Գալիսն այդ սոսէին խելքը գլուխը ժողովեց, նա իր
մեծ սեծ սև աչքերը զարմացած ու սարսակած չուել էր Ան-
նավ մրաբ:

— Անհա, ինչու ես դու քեզ կողցնում, լինչ կասի հայրդ:

— Հայրա ինձ օրդնել է, Գալիա, նա գիտէ որ ես Եկեղեց եմ
մեռնելու մեջ հաւասար համար, Ճշմարված Աստուծոյ փառքի
համար:

Քօղաւը երեսը շքեց։ Կա մտածում էր լնքն իրան։
„Այստեղ, հեռու անտառում, մի հայր օթհնում է ևր աղջկան
և ուզարկում մահւան հանդէս և ահա նա ինքը եկել է և
խնդրում է որ իրան գլխատեն, ներեն Գայլիալին, լնքն ուզում
է մեռնել ևր հաւատի համար . . . Խակ Բ՛ս . . . ոչ, իմ ձեռա
չի բարձրանալ իմ հարազատ աղջկայ վրայ։ Թող ինչ մինելու
է, ինի՞։

—Քաջ կողմին եւեր, գեմեց նա իս զինակիցներին, բարե
մարդիկ, թուշ կատէք, թուշ խորհուրդ կըտաք, Խելքս բան չե
կարում. ինչպէս երևում է Տերութիւնից մետքս Ծուլացել է:


—Նեղիս զբանց, —գոռաց ամբոխը միաձայն. —ՆԵՐԻՍ,
իշխան, մի գլխատիք:

Խլսանը մի քիչ մնաց մտածմուշքի մէջ. Ճեռքը թափ
տւառ ու ասաց.

— Թաղակածներ, և գէն շպատեց կացինը, ցասկեց ձիու
վրայ և սլացաւ անտառեց գուբս

Այն ժամանակից շատ տարի է անցել:

Բայց և իս աղջիկը վաղուց արդէն հանգստացել էին հողի տակ. Եշանք գերեզմանի վրայ բարձրացել էր թռմբ, իսկ Գալիակի վրայ կանգնած էր խաչ. Ժողովրդի մէջ երկար ժամանակ մնաց բարձր եշանուհու՝ Գալիակի լիշտակը, որ իս ամբողջ կեանքը նւկըել էր ոսքերի, թույքերի, աղքատների ու հաշմանդամների օգնելուն . . . Դեռ երկար, շատ երկար ժամանակ թէ քըստոնեայ, թէ կուտպաշտ, հարուստ թէ աղքատ գնում էին այդ եշանքան գերեզմանը համբուրելու, որ գտնում էր խետ անտառում, լճի ափին, բազմաձիւղ կաղ-նու տակ! . . .



Դ Ե Բ Զ

- | | |
|--|-----------|
| 35. Գալիայ, թարգմ Ս. Հայուսնեամ: | — 10 |
| 36. Աղա-Մահմետ Շահը Շուշումթարդ. չ. Ա- | |
| ուարձիւան | — — — — — |
| 37. Բաֆթի միմը այսպիս միմը այնպիս | — 1 — |

Օրացոյցներ 1891 թւականի.

Ո. Կ.

- | | | |
|--|-----------|-------|
| 38. Ծոցի | — — — — — | — 5 |
| 39. Նոյնը սամփր թղթի վրայ | — — — | — 20 |
| 40. Գրպանի պատկերապարդ | — — — | — 15 |
| 41. Նոյնը սամփր թղթի վրայ | — — — | — 50 |
| 42. Մոհադիրի գատկերապարդ սեղանի լիակա- | | |
| տար շատ կարեւոր տեղեկութիւններով | | 30 |
| 43. Նոյնը սամփր թղթի վրայ | — — — | — 1 — |
| 44. Կանանց նախարարական, կարեւոր յա- | | |
| ներածներով Կանանց Ընկ. Կանանդրու- | | |
| թիւններ և այլն | — — — | — 40 |
| 45. Նոյնը սամփր թղթի վրայ | — — — | — 1 — |
| 46. Պատի—նախածական— | — — — | — 50 |
| 47. Պատի—տախակ օրացոյց | | |
| Բողոք հրատարակութիւններից մի-մի օրինակ | | |
| գնողը ճամապարհածախս չկ վճարում | | |

ՊԱՏԿԵՐՆԵՐ

- | | |
|--------------------------------------|-------------|
| 48. Պարոյր Հայկազն և Սովուն Խորեմացի | — 50 |
| 49. Ս. Սահմակ և Սեսորովք | — — — 50 |
| 50. Զման (օլիօգրաֆիա) | — — — — 50 |
| 51. Մովերի երկրապանթ. | — — — — 3 — |
| 52. Արշարոյն | — — — — 3 — |
| 53. Ցիւնոս Խաչակիր | — — — — 3 — |

„Աղբիրի“ եւ „Տարագի“ բաժա-

նորդները ճամապարհածախս չեն վը

ճարում:

ԳԻՆԸ 10 Կ.

Գինել Տիֆլիս. Контора Ред. "Агбюրъ"

533

0004687

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004687

